

ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարբուխի (գրիպի) պատվաստանյութ (ապաակտիվացված կամ ռեկոմբինանտային) Ինչ պետք է իմանաք

Many Vaccine Information Statements are available in Spanish and other languages. See www.immunize.org/vis
Պատվաստանյութի մասին տեղեկատվական հայտարարություններից շատերը հասանելի են իսպաներեն և այլ լեզուներով: Տե՛ս www.immunize.org/vis

1 Ինչու՞ ստանալ պատվաստում

Հարբուխը («գրիպը») վարակիչ հիվանդություն է, որը տարածվում է Միացյալ Նահանգներում ամեն տարի, սովորաբար հոկտեմբերից մայիս ամիսներն ընկած ժամանակահատվածում:

Գրիպն առաջացնում են հարբուխի վիրուսները, և այն տարածվում է հիմնականում հազի, փոստոցի և անմիջական շփման միջոցով:

Գրիպով կարող է վարակվել յուրաքանչյուր մարդ: Գրիպը սկսվում է անսպասելիորեն և կարող է տևել մի քանի օր: Ախտաբանները տարբեր են՝ կախված տարիից, սակայն կարող են ներառել՝

- տենդը/սարսուռը
• կոկորդի ցավը
• մկանային ցավը
• հոգնածությունը
• հազը
• գլխացավը
• էթից արտադրությունը կամ փակ հիթը:

Գրիպը կարող է առաջացնել նաև թոքաբորբ ու արյան վարակ, իսկ երեխաների մոտ առաջացնել լուծ և ուշաքափություն: Եթե տառապում եք սրտային կամ թոքային հիվանդություններից նման առողջության խանգարումներից, ապա դրանք կարող են սրվել գրիպի պատճառով:

Որոշ մարդկանց համար գրիպն ավելի վտանգավոր է: Առավել մեծ վտանգի են ենթարկվում նորածին և փոքր տարիքի երեխաները, 65 տարեկան կամ ավելի մեծ մարդիկ, հղի կանայք, ինչպես նաև առողջության որոշ խանգարումներ կամ իմունային թուլացած համակարգ ունեցող մարդիկ:

Ամեն տարի Միացյալ Նահանգներում գրիպը դառնում է հազարավոր մարդկանց մահվան պատճառը, իսկ շատ ավելի մեծ թվով մարդիկ տեղափոխվում են հիվանդանոց:

Գրիպի պատվաստանյութը կարող է.

- պատկանել գրիպով վարակվելուց,
• վարակվելու դեպքում մեղմել գրիպի ընթացքը,
• թույլ չտալ, որ գրիպը ձեր միջոցով տարածվի ձեր ընտանիքի և այլ մարդկանց շրջանում:

2 Գրիպի ապաակտիվացված և ռեկոմբինանտային պատվաստանյութերը

Գրիպի յուրաքանչյուր սեզոնի ընթացքում խորհուրդ է տրվում ստանալ գրիպի պատվաստանյութի դեղաչափ: Գրիպի սեզոնի ընթացքում 6 ամսականից մինչև 8 տարեկան երեխաներին կարող է պահանջվել պատվաստանյութի երկու դեղաչափ: Մնացած բոլորին գրիպի սեզոնի ժամանակ պահանջվում է միայն մեկ դեղաչափ:

Գրիպի դեմ որոշ ապաակտիվացված պատվաստանյութեր պարունակում են սնդիկի հիմնով կոնսերվանտ, որը կոչվում է թիմերոսալ: Հետազոտությունները ցույց են տվել, որ պատվաստանյութերում պարունակվող թիմերոսալը վնասակար չէ, սակայն առկա են նաև կոնսերվանտ չպարունակող պատվաստանյութեր:

Գրիպի դեմ ներարկումները գրիպի կենդանի վիրուս չեն պարունակում: Դրանք չեն կարող գրիպ առաջացնել:

Գոյություն ունեն գրիպի բազմաթիվ վիրուսներ, որոնք մտապես փոփոխվում են: Ամեն տարի մշակվում է գրիպի նոր պատվաստանյութ՝ պատկանելու համար երեք կամ չորս այն վիրուսներից, որոնք հավանաբար կարող են հիվանդություն առաջացնել գրիպի գալիք սեզոնի ընթացքում: Սակայն նույնիսկ եթե պատվաստանյութն ամբողջությամբ չի համապատասխանում այդ վիրուսներին, այնուամենայնիվ այն կարող է որոշ չափով պատկանություն տրամադրել:

- Գրիպի պատվաստանյութը չի կարող կանխարգելել.
• գրիպը, որի պատճառը դառնում է գրիպի այնպիսի վիրուսը, որի դեմ չի գործում պատվաստանյութը, կամ
• հիվանդություններ, որոնք նման են գրիպին, սակայն գրիպ չեն:

Պատվաստվելուց հետո պատկանական հատկությունները ձևավորվում են մոտ 2 շաբաթ անց, և պատկանությունը տարունակվում է գրիպի ամբողջ սեզոնի ընթացքում:

3 Որոշ մարդիկ չպետք է ստանան այս պատվաստումը

Պատվաստանյութը ձեզ ներարկող անձին տեղեկացրեք.

- Ուժեղ, կյանքին սպառնացող ալերգիաներ ունենալու մասին: Եթե երբևէ հարբուխի պատվաստանյութի նկատմամբ կյանքին սպառնացող ռեակցիա եք ունեցել կամ ուժեղ ալերգիա ունեք այս պատվաստանյութի ցանկացած մասի հանդեպ, դուք չպետք է պատվաստում ստանաք: Գրիպի դեմ պատվաստանյութերի հիմնական մասը, սակայն ոչ բոլորը, պարունակում են ձվի սպիտակուցի փոքր քանակություններ:
• Եթե ունեք ժիլեկ-Բարի ախտահի (որը նաև կոչվում է GBS): GBS հիվանդության պատմություն ունեցող որոշ մարդիկ չպետք է պատվաստվեն: Դա պետք է ֆնարկել ձեր բժշկի հետ:
• Եթե լավ չեք զգում: Գրիպի դեմ պատվաստում սովորաբար կարելի է ստանալ թեթև հիվանդ լինելու դեպքում, սակայն հնարավոր է, որ ձեզ խնդրեն վերադառնալ՝ ապահիվելուց հետո:



4 Պատվաստանյութին ռեակցիայի վտանգները

Բազմաթիվ դեղամիջոցներ, ներառյալ պատվաստանյութերը, ունեն ռեակցիաներ առաջացնելու հնարավորություն: Դրանք սովորաբար թույլ են և անցնում են, սակայն հնարավոր են նաև լուրջ ռեակցիաներ:

Գրիպի դեմ պատվաստում ստացած մարդկանց մոտ սովորաբար ոչ մի խնդիր չի առաջանում:

Գրիպի դեմ պատվաստում ստանալուց հետո առաջացող **բերք խնդիրները** ներառում են.

- ցավը, կարմրությունը կամ պատվաստման տեղում այտուցը
- ձայն խզվածությունը
- աչքերի ցավը, կարմրությունը կամ բորբ
- հազը
- տենդը
- ցավերը
- գլխացավը
- բորբ
- հոգնածությունը

Այս խնդիրները, առաջանալու դեպքում, սովորաբար առաջանում են պատվաստումից **1** և **2** օր:

Պատվաստումից հետո **ավելի լուրջ** խնդիրները կարող են ներառել հետևյալը.

- Գրիպի ապակտիվացված պատվաստանյութի պատվաստումից հետո կարող է մի փոքր բարձրանալ Ժիլեն-Բարի (GBS) ախտանիշի վտանգը: Վտանգը գնահատվում է պատվաստանյութ ստացած մեկ միլիոն մարդկանց շրջանում հիվանդության **1** կամ **2** լրացուցիչ դեպքի չափով: Սա շատ ավելի ցածր է, քան գրիպի պատճառով առաջացող խանգարումները, որոնք կարող է կանխարգելել գրիպի դեմ պատվաստումը:
- Գրիպի դեմ ապակտիվացված պատվաստանյութը և պենմոկոկային պատվաստանյութը (PCV13) ստացող փոքր տարիքի երեխաներին միաժամանակ սպառնում է բարձր ջերմության հետևանքով առաջացող ուռուցիկության վտանգը: Կրպուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր բժշկին: Տեղեկացրեք ձեր բժշկին այն մասին, թե արդյոք գրիպի պատվաստում ստացող երեխայի մոտ երբևէ ուռուցիկություններ են եղել:

Խնդիրներ, որոնք կարող են առաջանալ ցանկացած պատվաստանյութ ներարկելուց հետո.

- Բժշկական գործողությունների, ներառյալ պատվաստումից հետո մարդիկ երբեմն ուռուցիկ են լինում: Ուռուցիկությունից և դրա հետևանքով առաջացող վնասվածքներից հնարավոր է խուսափել **15** րոպեի ընթացքում նստելու կամ պառկելու միջոցով: Տեղեկացրեք ձեր բժշկին գլխացավի, տեսողության փոփոխության կամ ակնաթիղջի աղմուկ ունենալու դեպքում:
- Որոշ մարդկանց մոտ առաջանում է սուր ցավ ուսի շրջանում, նրանք դժվարանում են շարժել այն ձեռքը, որտեղ ներարկում է կատարվել: Սա հազվադեպ է տեղի ունենում:
- Ալերգիկ սուր ռեակցիա կարող է առաջանալ ցանկացած դեղամիջոցի նկատմամբ: Պատվաստանյութի նկատմամբ նման ռեակցիաները տեղի են ունենում չափազանց հազվադեպ՝ մոտավորապես **1** դեպք մեկ միլիոն պատվաստումներից, և ի հայտ են գալիս պատվաստումից հետո մի քանի րոպեից մի քանի ժամվա ընթացքում:

Պատվաստանյութը, ինչպես նաև ցանկացած այլ դեղ, ունի լուրջ վնասվածք հասցնելու կամ մահվան պատճառը դառնալու չափազանց ցածր հավանականություն:

Պատվաստանյութերի անվտանգությունը մշտապես վերահսկվում է: Կրպուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք www.cdc.gov/vaccinesafety/

5 Ի՞նչ անել, եթե ուժեղ ռեակցիա է առաջացել

Ինչի՞նչ պետք է ուսադրություն դարձնել

- Ուսադիր եղեք մտահոգություն առաջացնող ամեն ինչի, օրինակ՝ ալերգիկ սուր ռեակցիաների, մարմնի բարձր ջերմության կամ արտասովոր պահվածքի նկատմամբ:

Ալերգիկ սուր ռեակցիաների նշաններից են եղնջատենդը, դեմքի և կոկորդի այտուցը, շնչառության դժվարությունը, արագ սրտի գարկը, գլխացավը և թուլությունը: Դրանք սովորաբար արտահայտվում են պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

Ի՞նչ պետք է անել

- Եթե կարծում եք, որ առաջացել է ալերգիկ ծանր ռեակցիա կամ մեկ այլ անհետաձգելի իրավիճակ, զանգահարեք **9-1-1** կամ հիվանդին տարեք մոտակա հիվանդանոց: Այլապես զանգահարեք բժշկին:
- Ռեակցիայի մասին այդուհանդերձ պետք է հայտնել Պատվաստման բացասական ազդեցությունների դեպքերի հաղորդման համակարգ (VAERS): Այդ մասին կարող է հաղորդել ձեր բժիշկը կամ կարող է հաղորդել ինֆորմայն VAERS կայքի՝ www.vaers.hhs.gov միջոցով կամ զանգահարելով **1-800-822-7967**.

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:

6 Պատվաստումից վնասվելու փոխհատուցման ազգային ծրագիր

Պատվաստումներից վնասվելու փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP) դաճելու ծրագիր է, որը ստեղծվել է՝ փոխհատուցում տրամադրելու համար այն մարդկանց, ովքեր վնասվածքներ են ստացել որոշ պատվաստանյութերի պատճառով:

Այն անձինք, ովքեր կարծում են, որ վնասվածքներ են ստացել պատվաստման հետևանքով, կարող են տեղեկանալ այս ծրագրի, ինչպես նաև բողոք ներկայացնելու մասին՝ զանգահարելով **1-800-338-2382** կամ այցելելով VICP-ի կայք՝ www.hrsa.gov/vaccinecompensation. Խոսքերը: Փոխհատուցում ստանալու նպատակով հայց ներկայացնելու ժամկետը սահմանափակ է:

7 Ինչպե՞ս կարող եմ ավելի իմանալ

- Դիմեք առողջապահական ծառայությունների ձեր մատուցողին: Նա կարող է տրամադրել պատվաստանյութի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկությունների այլ աղբյուրներ:
- Զանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության դեպարտամենտ: **1-888-767-4687**
- Դիմեք Հիվանդությունների հսկողության և կանխման կենտրոն (Centers for Disease Control and Prevention, CDC).
- Զանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
- Այցելեք CDC-ի կայքը՝ www.cdc.gov/flu **հասցեով**

DCH-0457A AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.

Vaccine Information Statement
Inactivated Influenza Vaccine

Armenian

08/07/2015

42 U.S.C. § 300aa-26

Translation provided by the California
Department of Public Health

Office Use Only



Armenian

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: